ներով փաստուեցաւ անոր չարութիւնը, և արժանի եղաւ բանադրանքի և նզովքի, և չնզովուեցաւ։ Այս մասին կաթողիկոսին գրեցինք և ցոյց տուինք Մուղնեցւոյն չարութիւնը, որպէս զի զայն բանադրէ և կարգալոյծ ընէ։ Եւ ահա՝ ոչինչ համարելով ժողովն ու նամակը, զոր բոլոր վարդապետներս և վեց աթոռակալներս կնքեցինք, այժմ իրաւունք կու տայ Մուղնեցւոյն։ Քանի որ կաթողիկոսը մեզ ոչինչ կը համարի, և այսպիսի գրութիւն մը կ'ուղարկէ, մենք իրեն պէտք չունինք. այսուհետեւ իր անունը պիտի չյիշուի Պատարագի մէջ»։

Այս որոշումին համաձայն, չաբաթ օրը կաթողիկոսը չեն յիշեր Ս. Պատարագի ընթացքին, այլ Ս. Գրիգոր Լուսաւորիչը. և ամենուն կ'արգիլեն Յակոբ Ջուղայեցիին յիշատակութիւնը սուրբ պաշտամունքի ժամանակ (4)։

Սակայն, երբ 1656 Օգոստոս 11ին էջմիածնէն պատուիրակ մը կը ժամանէ Կ. Պոլիս, մի քանի մեծամեծներ կը խնդրեն եղիազար Վարդապետէն, որ կաթողիկոսը յիշուի Ս. Պատարագի ընթացքին. եղիազար կը հրամայէ որ կաթողիկոսին յիշատակութիւնը դարձեալ կատարուի (5)։

---

(4) Անդ, 198-199, 202։
(5) Անդ, 203-204։